

## ՀԱՅՐԵՆԻ ՍՈՒՐՄԱԼՈՒՆ ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Հայ նշանավոր պետական և քաղաքական գործիչ Ավետիս Ահարոնյանը լինելով հայկական գողտրիկ անկյուններից մեկի՝ Սուրմալու աշխարհի ծնունդ, բազում ուշագրավ ակնարկներ ունի հայրենի ծննդավայրի մասին: Այս ակնարկները նա հետագայում հավաքեց և հանդես եկավ «Իմ գիրքը» ընդհանուր խորագիրը կրող հուշագրությամբ, որի առաջին գիրքը նվիրված է Սուրմալուին: Ավետիս Ահարոնյանի այս հուշագրությանն անդրադառնալու շարժառիթը նրա գրքի գրական-գեղարվեստական արժեքի ընդգծումը չէ միայն. նրանում հեղինակը բացառիկ խորաթափանցությամբ նկարագրել է հայ գյուղը և հայ մշակին բաժին հասած ծանր ճակատագիրը, որ մաքառելով ապրել և արարել է իր հայրենի եզրերում: Այս տեսակետից, հուշագրությունում ներկայացված պատկերներն ու կատարված դիտարկումներն, անշուշտ, պատմագիտական արժեք ունեն:

Ավետիս Ահարոնյանի հուշագրության մեջ հայրենի Սուրմալուին նվիրված ակնարկը սկսենք մայր գետ Արաքսի մասին նրա կատարած գրառումներից. վերջինիս մասին թեպետ շատ պատումներ են գրվել, սակայն առավել իրական բնութագրությունը, մեր կարծիքով, տվել է Ավետիս Ահարոնյանը. «Արաքսայան դաշտի կրծքից է անցնում Արաքսը, ակոսելով մերթ ուղղաձիգ նետի պես, մերթ գալարուն՝ վիշապի պես: Վարարուն, թե խաղաղ, նա միշտ վեհափառ է ու կենդանի: Լեռներն իրենց հողի գույնով և երկինքն ու ամպերն իրենց գունազեղ խաղերով, ամեն օր, ամեն ժամ Արաքսի ջրերին նորանոր երանգ են տալիս: Արաքսը հարափոփոխ է, հեղինդուկ, ասես մշտապես դժգոհ իր հունից ու ավերից, իր ալիքների ծփանքից ու գույնից: Նա մերթ պղտոր է, մերթ վճիտ՝ ինչպես հակինթ, մերթ

կատաղի է ու հորձանուտ, մերթ խաղաղ ու անուշ, մերթ փրփրում, փոթորկում ու ասիերը թողած՝ խենթի պես նետվում դեպի դաշտ ու բնակություն, մերթ խեղձանում է ու կծկվում դեպի իր չորացած ասիերի ավազը և իր ձկների մեջքը ցույց տալով արևին ու աստղերին»<sup>1</sup>:

Սուրմալուեցիների համար հատկապես աղետալի էին Արաքս գետի վարարումները. այդ դաժան տեսարանների ամենից դիպուկ նկարագրությունը մենք կրկին գտանք Ավետիս Ահարոնյանի գրքում. «Պայքարի՛ր, եթե կարող ես, փշրելու համար Արաքսի համառությունը. և սկսվում է հինավուրց մարտը:

— Տունը մեկ մարդ էգուց վաղ առավոտից, Արագ հաա՛...

Գյուղի գզիրն է կանչում. հավար է, ջրի հավարը. Արագը նորեն քանդել է ամբարտակները, որ մի շաբաթ առաջ էին բարձրացրել. առունները վերստին չոր են:

— Ջանըմ էս Արագը, տունդ քանդվի, Արագ՛...

Էլի խենթացել է, բաշը ցցել հինավուրց աժդահան. կոիվ է ուզում, տունը մի մարդ բոլոր գյուղերից և ամենն գորավոր, հուժկու տղամարդիկ. հանաք չէ Արագի դեմ ելնել:

Հաջորդ առավոտ մթնշաղին գյուղամեջը եռում է: Մարդ ու անասուն իրար են խառնված: Լծկան սայլերը ծառերի կանաչ, հաստ ձյուղերով բեռնավորված՝ ճոնչալեն շարժվում են փոշոտ ծանապարհներով: Ճամփան երկար է. ամեն գյուղից նորանոր խմբեր, նորանոր սայլեր են միանում առաջիններին: ...գորշ բազմությունը, սրունքներն ու բազուկները մերկ, բահերը արևի շողքերի տակ կայծկլտուն, հասնում են Արագին:

Տեսարանը շշմեցուցիչ է: Ոչ թումբ կա, ոչ ամբարտակ, Արաքսը ցրիվ է տվել իր ալիքների դեմ բարձրացած պատվարներն ու մոմալով ու խայտալով ծփծփում է ասիերի մեջ:

Բազմությունը՝ ինչպես ծովափը հասնող թռչունների երամ, նախ եռ ու գեռում է գետի սասանեցուցիչ տեսքի առաջ. ի՛նչ անել, ի՛նչպես փակել վիշապի ընթացքը, որ ջուրը դեպի մայր առուն թեքվի, ո՛վ պիտի առաջինը նետվի մոմաացող ալիքների մեջ. Արաքսը կատակ չի սիրում և հեշտությամբ չի զիջի:

— Հայ, ձեր ջանին մեռնեմ,— կանչում են ծերերը ջահելներին,— ձեռ ու ոտ արեք...

<sup>1</sup> Ավ. Ահարոնյան, Իմ գիրքը, հ. 1, Մանկություն, Փարիզ, 1927, էջ 158–159:

Արաքսի առաջին գրոհը սոսկալի է. գետը հրեշի պես փրփրում է, լեռնացած ալիքներով զարկվում է թումբին, որ կոխկրտում են հարյուրավոր ոտքեր... Ալիքների գրոհը սաստկացավ: Թումբը դողում է: Արաքսի թափը խորտակիչ է, ալիքները բարձրացան պատվարի վրա – ոտքերի տակից խուրձերը թավալ-թավալ ընկնելու վրա են.

— Հետ փախեք, հետ փախեք, թումբը գնաց...

Եվ իրար բռնած, իրարից կախված բազմությունը թողնում է ամբարտակը և նետվում է դեպի ափը՝ իր գլուխն ազատելու համար:

Նոր խրձեր են կապում, ավելի ամուր ու ավելի ծանր ու վերատին գլորում են ալիքների առաջ: Թափվում է քարն ու հողը, ոտներով կոխկրտում են, ձյուղերի արանքը ցեխով լցնում, հետո էլի խուրձ, էլի քար ու հող...

Արաքսի կատաղությունը սանձված է... Եվ այսպես դարեր...»<sup>1</sup>:

Հայտնի է, որ Սուրմալուի գավառը համարվել է Հայաստանի ցրտաշունչ վայրերից մեկը. ձմռան ամիսներին միջին ջերմաստիճանն այստեղ եղել է –12-ից մինչև –16 աստիճան: Ցրտաշունչ ձմեռները հատկապես իրենց զգացնել են տվել լեռնային վայրերում. քիչ չեն դեպքերը, երբ ուժեղ բուքը քշել–տարել է ոչխարների ամբողջ հոտեր՝ հովիվների հետ միասին: Առանձին վայրերում էլ ձյունն այնքան առատ է տեղացել, որ ընդհատվել է ամեն տեսակի հաղորդակցություն հարևան բնակավայրերի հետ: Այս հանգամանքը ևս չի վրիպել Ավետիս Ահարոնյանի տեսադաշտից. «Խստաշունչ ձմեռները գալիս էին լրացնելու մեր արհավիրքի սաստկությունը: Աշնան օրերից անօրինակ բուք ու բորանը կոխեց մեր երկիրը: Օր ու գիշեր ձյուն էր թափվում. լեռ ու դաշտ ծածկվեցին ձերմակ սավանով: Դեպի սահմանը, դեպի Վան, Բայազետ գնացող ուղտերի քարավանները դադարեցին. անգամ հուժկու նստը, երկապատանի առաջնորդը անկարող էր այն տարին ձյունի թանձր զանգվածը պատռել մեր մթին ու դժվար ձորերում:

Հետո վրա էին հասնում պարզկա, աստղազարդ գիշերները, պարզ, խարազանող հողմերով, որոնցից շրթունք էր ձաքձքում: Առունքը իսպառ չորացան, Արաքսը ծածկվեց աստույցի հաստ ու կարծր պատյանով, ու նրա վրայով սայլեր էին անցնում:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 160–165:

Զարհուրելի ձմեռ էր...»<sup>1</sup>:

Այն, որ գարունը մի առանձնահատուկ հմայք է հաղորդել Սուրմալուի բնապատկերին, հաստատում են իրենց մանկությունն ու երիտասարդությունը այստեղ անցկացրած հայտնի շատ գործիչներ: Ավետիս Ահարոնյանը նրանց թվում ևս բացառություն չէր. «Դրախտ էր մեր այգին: ...Բարձր, անանցանելի պարիսպների ներսը մի կատարյալ հեքիաթային պարտեզ. արհեստավոր հայրս մի ժամանակ ժրաջան հողագործ էր և հմուտ, ճաշակով ու գեղասեր պարտիզպան: Գարունը պճնված ու բուրավետ հարսի պես էր իջնում մեր այգին. դռնից ներս մտնելիս՝ առջևդ փոփում էր նախ վարդերի բուրաստանը և շուրջը հոտավետ սուսամբար կրկյան վտակի ափին: Մայիսյան լուսաբացին, երբ վարդերը բացվում էին փարթամ ու փթթուն և սուսամբարները փոում տերևներն ու փարում վարդենիներին, արբեցուցիչ բուրմունքը բռնում էր այգին. ներս մտնողը ասես արևելքի առասպելական մի ձոխ պարտեզ էր իջնում: ...Հիշում եմ, անմիջապես վարդերից հետո, բարձրանում են երկու հաստաբուն ու բազմաձյուղ թթենիները, որոնց պտուղը հասնում էր դեռ մայիսից: Թթենիներից հետո՝ երկու սովերաշատ ու լայնատերև ընկուզենիներ կային, որ մայրս ստիպեց հորս կտրել, քանի որ ձակատագրական ծառեր էին – ժողովրդական իմաստությունը գիտե, որ ընկուզենի տնկողը՝ նրա պտուղից չի ուտի... Նշենիների կողքին, կարճահասակ աղջիկների պես ձգվում էին դեղձենիները, ծաղկում են առաջինների հետ, քույրերի պես, և գարնան առաջին մեղուներին հայթայթում մեղրի հյութ: Հետո կեռասենիներն ու ալույսներն են շարվում ձերմակ ծաղիկներով և ձեռք-ձեռքի տված՝ գնում են մինչև այգու խորքը, ուր նրանց սպասում են սալորենիները իրենց դալուկ ծաղիկներով: Մրանց դեմ հանդիման խնձորենիներն են ու տանձենիները կարմիր ու ձերմակ ծաղիկներով և բույրը միասին կազմում են մեր այգու գնայելի բովվարը...

Ծառերի այս ազնվական հասարակության մեջ ծիրանենիներն են, որ բռնում է այգու կենտրոնը... Այգու կեսից ավելին բռնում է խաղողը. բարձր թմբերի լանջերին որթերի գալարուն ու հանգուցավոր ոստերը փոփած են կանոնավոր շարքերով: Եվ մեր բարդինները...»<sup>2</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 297:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 146-149:

Սուրմալուեցիների ամենից սիրած գործընթացն, իհարկե, այգեկութիւն էր: Այդ օրերին էր, որ գյուղացիները, ինչպէս ասում էին՝ մեծ ու փոքրով ամբարում էին իրենց ողջ տարվա քրտնաջան աշխատանքի արդյունքը: Ուստի, հասկանալի էր, որ այն վեր էր անվում յուրատեսակ տոնի. շարունակենք մեջբերել Ավետիս Ահարոնյանին. «Այգեկութիւն... գմայլելի պոեմ հայոց աշխարհի. այգին ծածկվում էր երփներանգ շղարշով. ամեն մի տերև մի քանի գույն ունի, համատարած ոսկու փայլի մեջ՝ ծառերը երկունքից հոգնած մայրերի խաղաղությունն ունին... Քուրերես ավելում են հնձանը, հայրս հատակի ձեղքերն է լցնում կրով: Վաղ առավոտից մեր ողջ ընտանիքը՝ չորս քույր, չորս եղբայր ծնողներիս հետ արդեն խաղողի անտառների մեջ ենք»<sup>1</sup>:

Մեծանուն սուրմալուեցին այնքան դյուրական է նկարագրում այգեկութի դրվագները, որ անհնարին է դարձնում այստեղ վերջակետ դնելը, ուստի շարունակենք մեջբերել նրա հուշերից. «Այգեկութիւն... բոլոր աշխատանքներից միակ օրհնվածը, ուր բազուկների ու մատների հետ սիրտն է գործում և հոգնությունը ցավ չէ, այլ գույների, բուրմունքի, գեղի անսահման վայելք. ամեն մի ողկույզ կտրելիս ուզում ես խելահեղորեն ճշալ ու ցատկել ցնծությունից և սիրտդ ողկույզի պէս ուռած երկնային հոգով հնձան է փնտրում...»

Հետո հնձանը, ուր զամբյուղներով ու կողովներով թափում ենք խաղողը, եղբայրներս մերկ ոտներով ձխում են ողկույզները՝ կարմիր կամ ոսկեգույն հեղուկը ծորում է, կարասները լցնում: Հարսանիք ու ու մկրտություն ունենք. թաղումի մասին ո՛վ է մտածում. գինին կյանքի համար է:

Կախանի խաղողը չենք ձխել. իծապտուկը, հարսնամատը, գոմշի մաման իրենց դիմացկուն կեղևներով՝ ձմռան համար են. կանեփի ճյուղերի վրա շարած՝ մեր մառանում կմնան ողջ ձմեռը, մինչև կարմիր գառիկ՝ չորացած ծիրանի, ալուչայի, սալորի ու թթի հետ: Դրախտ էր մեր այգին...»<sup>2</sup>:

Եվ, իհարկե, հայկական տների, այդ թվում նաև սուրմալուեցիների տան առաջին անհրաժեշտության իրը ճրագն էր: Կրկին դիմենք Ավ. Ահարոնյանին. այս տողերը նրա մանկության տարիների հուշերից են. «Հասնում է գիշերը. հանգչում է կյանքը և

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 151:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 151-152:

զարթնում է տան հոգին անձն ու ձևերին ձգտող: Առաստաղի սեն ու խավարը եղբայրացած՝ ու օձերի պես իրար պլլված՝ իջնում են խոնջած տան վրա. ճրագակալն է գալիս հեռավոր անկյունից, ինչպես թաքնված մի ոտանի աստված, որ սպասում էր իր ժամին: Սև ու այլանդակ կոճղի վրա բարձրանում է ճրագակալի երկթաթանի միակ բագուկը չարքերի ու խավարի դեմ ու բաց է անում իր մի հատիկ աչքը – վառ ճրագը»<sup>1</sup>:

Ասենք նաև, որ ամռան ամիսներին սուրմալուեցիները, ինչպես նաև Արարատյան դաշտի շատ գյուղերի բնակիչներ, մեծամասամբ քնել են կտուրների վրա: Կտուրներն այնքան տափարակ են եղել և միմյանց կպած, որ մեկ կտուրից առանց ցած իջնելու կարելի էր շրջանցել և անցնել ողջ թաղը:

Ինչպես Հայաստանի շատ շրջանների, այնպես էլ Սուրմալուի կանանց մոտ ամենօրյա սովորություն է եղել հաց թխելը: Հացը թխում էին թոնիրներում, որը կար գրեթե յուրաքանչյուր հայի օջախում: Հիշում է Ավետիս Ահարոնյանը. «Մեր տան տերը թոնիրն է, մի հինավուրց ու հարուստ պոեմ, որ մեր հեթանոս պապերն են վառել ու երգել: Կրակի տաճար, որի քրմուհին մայրս էր, նա գիտեր բոցերի ու կյանքի լեզուն: Մոխիրների տակ կայծը կա թաղված ու ամեն լուսաբացին հուրն է բորբոքվում, ծուխը բարձրանում է պալան-պալան ու տունը լցնում... Քույրս ցան է ածում կրակի վրա, մի վայրկյան բոցն է սակվում, ծուխը բռնում է ամեն ինչ ու ապա հուրը բռնկվում է նոր թափով... Հետո, երբ լավ վառքով թոնիրը կիզիչ կողեր ունի, սկսվում է հացի թուխը: Հացի տախտակի վրա խմորի գունդերն են բազմում, նրանց փափուկ մարմնով անցնում է գրղնակը, հարթում, փռում է լավաշը, որ մայրս նախ իր մերկ բագուկներն է ձգում փոխ առ փոխ և շտապով փռում է մարզըղայի վրա, ապա աջ ձեռքով բարձրացնում է, կոանում ու թափով թոնրի բարկ կողին զարկում: Իրար հետևից լավաշ ձերմակ հացը՝ կարմիր պղպաղակներով, եփվում, դուրս է գալիս թոնրից և թարմ հացի անուշ բուրմունքը լցնում է ողջ տունը: Վերջանում է հացի թուխը և թոնիրը մնում է որպես տան ջերմության ու կյանքի աղբյուր»<sup>2</sup>:

Սուրմալուի բնապատկերների ներկայացումից անցնենք պատմագիտական բնույթի դիտարկումներին: Հայտնի է, որ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 22–23:

Մուրմալուի գավառը համարվել է ռուսական բանակի առաջին կարևոր հենակետը և այստեղից է սկիզբ առել ռուս-թուրքական պատերազմների ռազմական գործողությունների մի ճակատը: Ռուսական բանակի Երևան-Բայազետ ուղղության գործը, որ առավելապես հայտնի է որպես Երևանյան ջոկատ, ռազմական գործողությունները սկսել է հենց Մուրմալուի սահմաններից: Եվ, իհարկե, ռուս-թուրքական պատերազմները խիստ բացասական ազդեցություն են ունեցել Մուրմալուի հայկական գոյության վրա. որպես կանոն, այդ տարիներին գավառում ակտիվանում էին թուրք-քրդական տարրերը: Օգտվելով ստեղծված իրավիճակից, այդ ավազակախմբերը թալան էին կազմակերպում գավառի հայկական գյուղերում. Ավ. Ահարոնյանի հուշերից բերվող այս քաղվածքն, անշուշտ, գերծ չէ պատմագիտական արժեքից. «Մեր լեռներում հարամիները շատացան, մեր հարևան թուրքերը ավելի ինքնամփոփ դարձան և ավելի զուսպ իրենց զրույցների, իրենց շարժ ու ձևերի մեջ, — գրում է Ավ. Ահարոնյանը:— Կոիվ էր, արյունի փոթորիկ, որ զարկում էր մեր աշխարհին: Լեռնական քրդերի հարձակումները, մեր նախիրի ու հոտերի վրա, Մասիսի ստորոտներում օրավուր բազմացան ու ավելի հանդուգն դարձան: Կոիվ էր, ռուս-տաճկական պատերազմը... Մեր տներում տեղավորվեցին կոզակներ ու զինվորներ: Պատերազմը հեղհեղվում էր ինչպես ամերից դուրս եկած վարարուն գետ, որ իր ընթացքի մեջ ոչինչ չէր խնայում. ո՛չ բնություն, ո՛չ աշխատանք և ոչ կյանք...»<sup>1</sup>:

Մեծ սուրմալուեցու հուշերից պարզ է դառնում նաև, որ ռուս-թուրքական պատերազմի տարիներին շատ արևմտահայեր ապաստան էին գտնում Մուրմալուի հայկական գյուղերում: Իսկ եթե այդ ամենին ավելացնենք ռուս զինվորների տեղավորումն ու սնունդով պարտադիր ապահովումը, ապա պարզ կդառնա հայ գյուղացիների վրա ընկած բեռի ծանրությունը. «Եվ ջարդված, արյունավա թուրքահայությունը, որ թողած հարկ ու բնակություն, արտ ու անդաստան սահմանից թափում էր վար, դեպի Մուրմալու. ցավի ու արսուռի ջրվեժ», — գրում է Ահարոնյանը<sup>2</sup>:

Թվում է, թե պատերազմից հետո պիտի ավարտվեին նաև հայ գյուղացիների տանջանքներն ու զրկանքները: Բնավ. պա-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 267-268:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 275:

տերազմին հեռևում է նոր արհավիրք – առաջին անհրաժեշտության ապրանքների համատարած թանկություն: Ավ. Ահարոնյանն իր գրքում այնքան տպավորիչ է նկարագրել այս իրավիճակը, որ մեզ մնում է միայն մեջբերել այդ հատվածը. «Պատերազմը վերջացավ: Փախից ետ եկանք: Ինչպես բոլոր արյունահեղ բախումներից ու ավերումներից հետո՝ հասավ քստմունքի երկվորյակը – սովն ու որովայնատենդը:

Հացը թանկացավ, մարդկային կյանքը էժանացավ: Տորենը սև աղվեսի մորթի էր դարձել. գարին անասուններից մարդուն անցավ. բախտավոր էին շատերը, որոնք գարու և կորեկի հացով կարողանում էին իրենց ընտանիքը սովի ճիրաններից փրկել: Անասունների կոտորածը անասելի չափերի հասավ. գոմերը դատարկվում էին. կեր չկար: Ձևափոխված պատերազմն էր, որ շարունակում էր ավերմունքը խաղաղության մեջ: Պատերազմների գործած բազմապիսի չարիքը դուրս է մարդկային չափից ու կշռից»<sup>1</sup>:

Ուստի, այն, որ սուրմալուեցին դառն քրտինքով է վաստակել իր մի կտոր հացն ու ապրուստը, ամենքին է հայտնի: Մակայն, որ դժվարությամբ ու չարչարանքով ձեռք բերված ապրուստը մի օրում կարող էր ի չիք դառնալ, Սուրմալուի համար ևս նորություն չէր: Կարկուտն ու հորդառատ անձրևները, Արաքս գետի գրեթե մշտական դարձած վարարումները, ամառվա շոգն ու տապը, ճահիճներից եկող անտանելի գարշահոտն ու հիվանդությունները անպակաս էին սուրմալուեցու առօրյայից: Մակայն նույնիսկ այս, կարելի է ասել՝ կիսադժոխային պայմաններում, սուրմալուեցին արարել է, ապրել, բազմացել, ուրախացել և մի լավ գինովցել է իր ստեղծած բարիքից: Մակայն ի՛նչ գնով... «Արաքսը և իր ափերին պինդ նստած ժողովուրդը,— գրում է Ավ. Ահարոնյանը,— հավասարապես համառ ու տոկուն, օրն ի բուն դեմ հանդիման են, ձակաս առ ձակաս. մեկն իր ջուրն է պինդ պահում, իսկ մյուսը մահու գնով այդ ջուրը պիտի շորթի՝ քաղցից չմեռնելու համար: Զիջում չկա. հաղթություն–պարտություն փոխ առ փոխ են: Վա՛յ նրան, ով առաջինը թուլանա ու տեղի տա, և ամեն մեկը իր հաղթանակի ժամն ունի...»<sup>2</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 296:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 158:



Ավետիս Ահարոնյանի մասին ուշագրավ այսպիսի տեղեկության հանդիպեցինք «Մշակ» թերթում: 1892 թվականի թերթի համարներից մեկում նշվում էր, որ Իգդիրի երկդասյա դպրոցի ուսուցիչների փոփոխությունը հաճախակի բնույթ է կրել: Թերթի դիտարկումով, այդ խնդրում իրենց «սև գործն» են կատարել տեղի անկարող և ամեն տեսակի առաջադիմությանը դեմ ուժերը. «Վեց տարի շարունակ անդադար ու բարեխիղճ աշխատելուց հետո թողեց և Իգդիրից հեռացավ ավագ ուսուցիչ Ավետիս Ահարոնյանը: Այս վեց տարվա ընթացքում ինչ հալածանք, ինչ բարոյական տանջանք ասես, որ նա չկրեց իր բարեխիղճ աշխատասիրության փոխարեն»,— գրում է «Մշակ» թերթը<sup>1</sup>: Ի դեպ, իր հարազատ կրթօջախի՝ Իգդիր–Մավայի դպրոցի մասին (բացվել է 1906թ. բնակչության թիվը՝ 1672, դպրոցահասակ երեխաներինը՝ 251)<sup>2</sup> իր հուշերում Ավետիս Ահարոնյանը գրում է. «Մեր եկեղեցու բակում էր դպրոցը... Ընդարձակ սրահ, լայն, լուսավոր պատուհաններով ու հարմար նստարաններով: Հետո՝ աշակերտները գրելու համար ունեին իրենց քարետախտակները: Մեր դասատուն գրագետ, եռանդուն մի երիտասարդ՝ իրապես վարժապետ գեթ այն ժամանակի համար: Ծեծը կար դարձյալ, բայց՝ քանոնով ու սպտակով. նույնպես խիստ մարդ էր, բայց սովորեցնում էր կարդալ, թարգմանել ավետարանը – թարգմանել, սա ինքնին մեծ նորություն էր. արդեն հասկանում էի գեթ բառերի իմաստը, թեև առանց նրանց ընդհանուր թաքնված խորհուրդը թափանցելու, հետո գրում էինք ավելի հասկանալի կտորներ ու աշխարհաբառ, վերջապես սովորում էինք թվաբանություն»<sup>3</sup>:

Այս պատմությունը ևս մենք գտանք Ավետիս Ահարոնյանի հուշերում, թեպետ սկիզբը քիչ այլ բան է ասում. «Տրտաշունչ ձմեռների ժամանակ գազանները մեռնում էին մեր գյուղերի շրջակայքում սովից ու ցրտից: Գայլերը մահու գնով արշավում էին դեպի մարդկային բնակությունները որսի և գյուղացիք մահակներով նրանց ջարդում մեր կալերում... Մորացիկները բազմացել էին:

Մանուկներ էինք և մեր փույթը չէր: Գարի հաց էինք կրծում ու դուրս նետվում սառնամանիքին: Ընկերներիս հետ մի օր մի

<sup>1</sup> «Մշակ», 1892, N 119:

<sup>2</sup> Հայաստանի ազգային արխիվ, ՅԱԱ, ֆ. 19, ց. 1, գ. 267, թ. 3:

<sup>3</sup> Ավ. Ահարոնյան, Իմ գիրքը..., էջ 79–80:

սատկած գայլ գտանք կալերում: Ճարձատուն ցրտի տակ նրա մորթին հանեցինք ահագին դժվարությամբ: Քաչալ Թաթոսը հավատացնում էր, թե բոլոր լավ թմբուկները գայլի մորթով են պատված: Օրերով Մարտոյենց գումում թաքնվեցինք անասունների մտորի մեջ և մորթին խնամքով մաքրեցինք բրդից, փեռքերով հապեցինք, ապա մի հին մաղ ձարեցինք, վրան պատեցինք ու թմբուկը պատրաստ էր: Թմբկահարությամբ փողոց դուրս եկանք. ագռավները փախան, քաչալ Թաթոսն ասում էր, որ եթե այս թմբուկով գիշերը դաշտ դուրս գանք ու թմբկահարենք, գայլերն էլ կփախչեն և թե ինքը մենակ էլ կարող է այս թմբուկով գազանների դեմ ելնել գիշերով. փչում էր նզովյալը:

Աղմկում էին ամբողջ թաղում: Մեզ սաստում էին մեծերը. փախչում էինք փողոցից փողոց...»<sup>1</sup>:

Եվ վերջում, պատմագիտական մի փոքր դիտարկում Սուրմալուի մասին, որին անմասն չի եղել Ավետիս Ահարոնյանը: Ինչպես հայտնի է, Սուրմալուի հարցը մի քանի անգամ քննվել է 1921թ. կայացած նախ՝ Մոսկվայի ռուս-թուրքական, ապա Կարսի թուրք-անդրկովկասյան կոնֆերանսներում, որտեղ Քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքված պայմանագրի արդյունքում Սուրմալուն դարձավ թուրքական տարածք: Եվ որքան էլ հայ գործիչները բողոքեցին այս հակահայկական գործարքի դեմ, այնուհանդերձ թուրքերին հաջողվեց վճիռը թողնել անփոփոխ. Լոնդոնի 1921թ. և Լոզանի 1922–1923թթ. կոնֆերանսներում թեպետ հայկական պատվիրակությունները բազում անգամ թակեցին Անգլիայի և Ֆրանսիայի վարչապետների ու օտարերկրյա մեծ ու փոքր պաշտոնյաների դռները, հարցն այդպես էլ արժանացավ Սևրի դաշնագրի ձևակառագրին... «Այսօր, փետրվարի 20-ին,— հիշում է Ավետիս Ահարոնյանը (1923 թ. – Շ.Շ.) ձաշից հետո ժամը 5-ին Նորատունկյանի հետ միասին տեսնվեցանք Պուանկարեի հետ (Ֆրանսիայի վարչապետ — Շ.Շ.): Նորատունկյանը, առաջինը խոսք առնելով, ծանրացավ Թուրքաց Հայաստանի վրա... Կովկասում և այլուր 500 հազարի չափ հայ փախստական սպասում են իրենց հայրենիքը վերադառնալուն: Հայությունը կկարողանա Ազգերի լիգային առաջարկել 5000 հայ կամավորականներ և 25 միլիոն դոլլար, եթե հոգաատար մի պետություն հանձն առնի Հայաստա-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 298–299:

նը իր խնամքի տակ առնել ու կարգավորել: Անհնարին է Թուրքիայում ապահովել հայության վիճակը, որովհետև թուրքերը հազար հնար ունեն խախտելու այդ կարգի համաձայնությունները. նրանք ջարդարարներ են, անվստահելի և անուղղելի:

Պուանկարեն, որ լսում էր ակնհայտ տհաճությամբ, վերջին խոսքերից առաջ զայրույթով ձեռքը սեղանի վրա ցնցեց ու բացականչեց.

— Թողեք խնդրեմ անցյալը: Մենք հնար չունենք թուրքերին պատերազմ անելու: Ես չեմ կարող ժամանակս կորցնել: Խոսենք իրականությունից...»<sup>1</sup>: Այդուհանդերձ, ինչպես հաստատում են Ավ Ահարոնյանի հուշերը, Սուրմալուի մասին միակ հոգացողը եղել է նորվեգացի մեծ հումանիստ Ֆրիտյոֆ Նանսենը, որին էլ լսող չկար մեծ դիվաններում. «Դուք գիտեք,— դիմելով Նանսենին ասել է Ահարոնյանը,— որ հակառակ 10–15 հազար գաղթականների, որ անցան Հայաստան վերջին տարիներին, հարյուր հազարի չափ մարդ է հեռացել Հայաստանից: Պարզ է, որ ապրել չի լինում: Սրան դարման է պետք: Եվ դարմանը Թուրքաց Հայաստանն է: Նայեցեք այս քարտեզը. այս բոլոր տարածությունները ամայի են թուրքաց ձեռքին և նրանք երբեք չպիտի կարողանան բնակեցնել:

— Ամայի է և այս,— ասաց Նանսենը և ձեռքը տարավ Կարսի և Սուրմալուի կողմերը... Ես գիտեմ, որ այդ հողերը պարապ են: Ես գնացի մինչև Արաքսի ավերը և նայում էի Սուրմալուին, ամբողջը դատարկ է... Միայն Մասիսի փեշերին քյուրդերի հանդիպեցի...»<sup>2</sup>:

Այսպիսին էր իր հայրենի Սուրմալուն Ավետիս Ահարոնյանի հուշերում, որը հայոց շատ ու շատ հինավուրց բնակավայրերի նման կուրուսյալ հայրենիքի դառը ճակատագրին արժանացավ:

<sup>1</sup> Ավ. Ահարոնյան, Սարդարապատից մինչև Լոզան, Երևան, 2001, էջ 219:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 239:

**Քանալի բառեր** – Ավետիս Ահարոնյան, Սուրմալու, հուշեր, հայրենի գյուղ, նկարագրություն, գյուղական առօրյա:

**HAYKAZ HOVHANNISYAN. *Native Surmalu in Avetis Aharonian Memoirs.***

Famous Armenian writer and political figure Avetis Aharonian was born in Surmalu region and expressed his warm feelings for his native land in his memoirs. Later, he collected these essays and published in a book entitled “My Book.” The first book is exclusively dedicated to his homeland – Surmalu.

Avetis Aharonian with elaborate insight described his native land and the hard work of rural peasants who, overcoming great difficulties, lived and worked in his homeland. From this point of view, memories and observations of the great Armenian writer Avetis Aharonian, undoubtedly, have historiographical value.

**Keywords:** Surmalu, Avetis Aharonian, memoirs, native village, describe, daily life of the village.